ԹԵՄԱ 3. ՎԵՐԱԿՈՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 21. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVIII– XIX ԴԱՐԵՐՈՒՄ

1 Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելուց հետո Արևելյան Հայաստանը մինչև XX դարի սկիզբը նկատելի առաջընթաց ապրեց: Բացի այդ, հայկական գաղթավայրեր կային տերության տարբեր մասերում՝ Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Ս. Պետերբուրգ, Մոսկվա, Աստրախան, Ղրիմ և այլն: Դրանցում հայերի տնտեսությունը, հասարակական ու մշակութային կյանքը վերելք էին ապրում: Հայ համայնքները ապրում էին համազգային կյանքով, ունեին իրենց դպրոցները, ազգային կրոնական կառույցները, թերթերն ու ամսագրերը:

2 Հերթական անգամ հայությունը խաբված դուրս եկավ: Ռուսաստանը բոլոր ռուս–թուրքական պատերազմներում Կովկասյան ճակատում ունեցած ձեռքբերումները՝ որպես մանրադրամ ծառայեցնում էր Բալկաններում իր քաղաքական ձեռքբերումների համար: